ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների խորհուրդը ՀՀ - նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում, Հայաստանի Երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ և ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ գումարեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնմեկերորդ նստաշրջանը (2016 թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը)՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյա հոբելյանին: Եռօրյա նստաշրջանի հինգ նիստերում լսված 37 զեկուցումները նվիրված էին արվեստագիտության տարբեր գիտաճյուղերին՝ երաժշտագիտություն, կերպարվեստագիտություն, ճարտարապետության պատմություն, կինոգիտություն և թատերագիտություն:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին՝ գիտնականներ Արվեստի ինստիտուտից, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայից, Երևանի պետական համալսարանից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, Ա. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտից, «Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնից, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտից, Կոմիտասի թանգարան-ինստիտուտից, Երևանի Քր. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցից, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից, նաև Ֆրանսիայից ու Իրանի Իսլամական Հանրապետությունից:

Բացման խոսքով հանդես եկավ Արվեստի ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղայանը, *մասնակիցներին ողջունեց Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ* Արամ Սաթյանը: *Այնուհետև «Երիտասարդ արվեստաբանների խորհուրդը. անցած ուղին և ձեռքբերումները» բանախոսության մեջ նույն ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստ. թեկնածու* Մերի Կիրակոսյանը *ներկայացրեց էջեր խորհրդի գործունեության 12-ամյա պատմությունից:*

Նստաշրջանի լիագումար նիստում առաջինը հանդես եկած՝ Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստ. թեկնածու Մարտին Հարությունյանը *քննության առավ ՀՀ բանկերի գլխամասային գրասենյակների շենքերը և դրանց արտաքին, ներքին ձևավորումները: «Նվագախմբի մենեջմենթի XXI դարի միտումները» զեկուցման մեջ Հայաստանի պետական երիտա-*

սարդական նվագախմբի տնօրեն, արվեստ. թեկնածու Սարգիս Բալբաբյանն *անդրադարձավ նվագախմբի մենեջմենթի XXI դարի ուղղություններին՝ բացահայտելով նվագախմբի գեղարվեստական բաժնի աշխատանքների դերը: Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի գիտաշխատող, արվեստ. թեկնածու* Լիլիթ Արտեմյանն *ուրվագծեց հայ կատարողական արվեստի նվիրյալ, տաղանդավոր դաշնակահարուհի և Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային մասնագիտական ամբիոնի պրոֆեսոր Անահիտ Բոգդանյանի ստեղծագործական դիմանկարը՝ ներկայացնելով նրա գործունեության կատարողական և մանկավարժական ուղղությունները: Քր. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի տնօրեն, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայցորդ* Էդգար Գյանջումյանը *բացահայտեց ռոք երաժշտության գեղագիտության առանձնահատկությունները: «Կնոջ կերպարը Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստում» բանախոսության մեջ ԵՊՀ դասախոս, արվեստ. թեկնածու* Հռիփսիմե Վարդանյանն *անդրադարձավ նկարչի կանացի կերպարների վերլուծությանը: Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական բաժնի վարիչ, արվեստ. թեկնածու* Տաթևիկ Շախկուլյանը *«Պոլիֆոնիկ հիերարխիան հայ երաժշտության մեջ» զեկուցման մեջ քննության առավ սիմֆոնիկ երաժշտության մեջ հանդիպող ֆակտուրային առանձնահատուկ տեսակը, որի դրսևորումները հայ կոմպոզիտորների երկերում խիստ հատկանշական են: «Սուբյեկտիվության սահմանը գիտական ուսումնասիրության մեջ» բանախոսության մեջ Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստ. թեկնածու* Արսեն Համբարձումովն *անդրադարձավ գիտական աշխատանքի կառուցվածքին և գեղարվեստական ստեղծագործության օբյեկտիվ գնահատականին:*

Առաջին նիստում Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ Դավիթ Մելքոնյանը *ներկայացրեց երգչուհի Նադեժդա Պապայանի 1904 թ. թիֆլիսյան հյուրախաղերը: «Բրոնզե գոտիների մարդակերպ ֆիգուրների պատկերագրությունը և իմաստաբանությունը (մ. թ. ա. II–I հազ.)» զեկուցումով հանդես եկավ Արվեստի ինստիտուտի ասպիրանտ* Մարիա Լազարևան*: Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայցորդ* Սոֆյա Ղազարյանը *«Հայ կոմպոզիտորների մանկական ալբոմների նշանակությունը պատանի դաշնակահարների ձևավորման գործում» զեկուցման մեջ դիտարկեց վերջին կես դարում ստեղծված հայկական մանկական դաշնամուրային ալբոմները և դրանց մեջ առկա ստեղծագործական լուծումները: Նոր Ջուղայի / Իսպահանի առանձնատների ճակատների ճարտարապետական համամասնությունների ու համակարգի ուսումնասիրությանն էր նվիրված Արվեստի ինստիտուտի ասպիրանտ* Արման Լուկասի *(ԻԻՀ) զեկուցումը: Արվեստի ինստիտուտի ասպիրանտ* Գոռ Սալնազարյանն *անդրադարձավ XIX դ. վերջի և XX դ. սկզբի հայ կատարողական արվեստի երկու փայլուն ներկայացուցիչների՝ բարիտոն Բեգլար Ամիր-*

ջանյանի և ջութակահար Հովհաննես Նալբանդյանի ստեղծագործական համագործակցության պատմությանը, խոսեց 1904–1915 թթ. Պետերբուրգում, Պերմում, Պետրոգրադում և Թիֆլիսում տեղի ունեցած նրանց համատեղ համերգների մասին: Իրանական պրոֆեսիոնալ երաժշտության մեջ «Շահնամեի» անդրադարձներին էր նվիրված Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ Ասղար Ջանաբի Վահաբի *(ԻԻՀ) զեկուցումը:*

Նստաշրջանի երկրորդ օրվա առաջին նիստում Արվեստի ինստիտուտի հայցորդ Նարե Նադարյանը *քննության առավ քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանի դիմաքանդակային արձանիկները: Թառահար և դիրիժոր Հովիկ Սահակյանի գործունեությանն անդրադարձավ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դասախոս, արվեստ. թեկնածու* Սոնա Մակարյանը*: «Երևանի երկու եկեղեցիների արտաքին հարդարանքը» զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի հայցորդ* Լիլիթ Կարապետյանը *մեկնաբանեց Կոնդի Սբ. Հովհաննես և Նորագավթի Սբ. Գևորգ եկեղեցիների քանդակային հարդարանքը՝ մատնանշելով եկեղեցիների հարթաքանդակների պատկերագրական առանձնահատկությունները: Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի գիտաշխատող, արվեստ. թեկնածու* Հովհաննես Մանուկյանը *ներկայացրեց վրաց ժամանակակից կոմպոզիտոր Օթար Թաթիշվիլու ստեղծագործական դիմանկարը (ի դեպ, կոմպոզիտորի ստեղծագործությունների կատարմամբ բանախոսը հանդես է եկել 2016 թ. Երևանում և Թբիլիսիում տեղի ունեցած նրա հեղինակային համերգներին): Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ* Անի Աճառյանը *«Թանգարանների ինտերիերի դիզայնի նախագծման փուլերը և դրանց գեղագիտական առանձնահատկությունները» զեկուցման մեջ ներկայացրեց թանգարանների ինտերիերի դիզայնի կազմակերպման հաջորդականությունը, նշեց թանգարանների ինտերիերի միջազգային որոշ օրինակներ: Հայ դաշնակահարուհի, երգչուհի, երաժշտագետ և մանկավարժ Մարգարիտ Բաբայանի գործունեության թիֆլիսյան շրջանի մասին զեկուցման մեջ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի տնօրեն, Արվեստի ինստիտուտի հայցորդ* Նիկոլայ Կոստանդյանը *վերլուծեց նրա երաժշտական-քննադատական գործունեությունը՝ քննության առնելով 1895–1896 թթ. «Արձագանք» լրագրում տպագրած հոդվածները: Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող XIII–XIV դդ. ձեռագրարվեստում առկա Գրիգոր Լուսավորչի կերպարի պատկերագրության մասին էր Արվեստի ինստիտուտի հայցորդ* Քնար Կատվալյանի *զեկուցումը: Նույն ինստիտուտի ասպիրանտ* Սառա Մալեք Մոհամմադու *(ԻԻՀ) բանախոսությունը նվիրված էր Թեհրանի թատրոնների ճարտարապետության մեջ իրանական ավանդույթի դրսևորմանը:*

Նստաշրջանի երկրորդ օրվա երկրորդ նիստում Արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվեստ. թեկնածու Մարգարիտա Քամալյանը *վերլուծեց Արա Հարությունյանի «Կոմիտասականը»՝ քննելով Հարությունյանի՝ Երևանում տեղադրված, Հայաս-*

տանի ազգային պատկերասրահում, արվեստագետի ընտանիքի հավաքածուում և Արվեստի ինստիտուտում պահվող, Կոմիտասին նվիրված մոնումենտալ և հաստոցային քանդակներն ու գծանկարները: Արվեստի ինստիտուտի հայցորդ Մարիաննա Պողոսյանը *ներկայացրեց Հայաստանի կիթառահարների ասոցիացիայի և Գերմանիայի Վուպերտալի կիթառահարների միջազգային ասոցիացիայի նախաձեռնությամբ Երևանում 2015 և 2016 թթ. կազմակերպված կիթառի միջազգային փառատոնները: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ճարտարապետության տեսության, պատմաճարտարապետական ժառանգության վերականգնման, վերակառուցման, գեղեցիկ արվեստի և պատմության ամբիոնի ասիստենտ, ճարտարապետության թեկնածու* Դավիթ Նահատակյանը *քննության առավ Տայքի և Գուգարքի IX–XI դդ. հայկական ճարտարապետական դպրոցի փոխազդեցությունների հարցը՝ մատնանշելով այդ ճարտարապետական դպրոցի ազդեցությունները հարակից երկրների ճարտարապետության վրա, որոնք դրսևորվում են պաշտամունքային կառույցների հատակագծային, ծավալատարածական և դեկորատիվ հարդարանքային լուծումներում: Լևոն Թութունջյանի՝ XX դ. առաջին կեսի եվրոպական աբստրակտ արվեստի կարևոր բաղկացուցիչ հանդիսացող Կոնկրետ արվեստ և Աբստրակցիա-ստեղծագործություն խմբավորումների մասնակցության մասին էր «Բարձր արվեստ» կերպարվեստի կենտրոնի աշխատակից* Իրինա Գարասեֆերյանի *զեկուցումը: Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի կրտսեր գիտաշխատող* Անի Հակոբյանը *ներկայացրեց «Օրհնանքն ու անեծքն իբրև բանաձևային բանահյուսության տեսակ հայ օրորներում» թեման: Նույն ինստիտուտի ասպիրանտ* Յաշար Հոսսեինզադե Նաղադեի *(ԻԻՀ) բանախոսության մեջ բացահայտվեց կայունության ցուցանիշների դրսևորումը Դուբայի ճարտարապետության մեջ տաք անապատային կլիմայում: Արվեստ. թեկնածու* Շուշանիկ Զոհրաբյանի *(Ֆրանսիա) զեկուցումը Վարդգես Սուրենյանցի «Հայ կանանց ելքը եկեղեցուց» պատկերի գեղանկարչական առանձնահատկությունների մասին էր:*

Նստաշրջանի վերջին նիստում «Զովունիի Սբ. Պողոս Պետրոս եկեղեցու VI դ. հորինվածքի վերակազմությունը» զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի ավագ գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու Արեգ Հասրաթյանն *ընդգծեց եկեղեցու V դ. վերջում և VI դ. սկիզբին գմբեթավոր դահլիճի վերակառուցված լինելու հանգամանքը և վերջինիս առանցքային նշանակությունը հայկական ճարտարապետության մեջ: Նույն ինստիտուտի հայցորդ* Արմենուհի Բաբլոյանը *քննության առավ Գևորգ Արմենյանի «Վարպետի սիրտը» կանտատը: Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտացուցադրական բաժնի վարիչ* Նաիրի Խաչատուրյանը *«Իմ տատրակիս քունն է եկել». ժողովրդական օրորի մի նորահայտ նմուշ» զեկուցման մեջ երաժշտագիտական տեսանկյունից վերլուծեց նախկինում միայն տեքստային տարբերակներով հայտնի ժողովրդական օրորի մեղեդին և անդրադար-*

ձավ բանաստեղծական տեքստի առանձնահատկություններին: Տիգրան Չիթողջյանին նվիրված զեկուցման մեջ Արվեստի ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստ. թեկնածու Մանե Մկրտչյանն *ընդհանուր գծերով ներկայացրեց նրա ստեղծագործական ուղին և անդրադարձավ նրա արվեստի առանձին փուլերին ու դրանց բնութագրական առանձնահատկություններին: Վիլյամ Սարոյանի դրամաներում հայկականության հարցի մասին էր Արվեստի ինստիտուտի Թատրոնի բաժնի կրտսեր գիտաշխատող* Անուշ Ասլիբեկյանի *զեկուցումը: Հայոց պանթեոնային կառույցների բնութագրման ընդհանուր համատեքստում «Թբիլիսիի հայկական գերեզմանատների տապանաքարերի գեղարվեստական առանձնահատկությունները» վերնագրով բանախոսությունը ներկայացրեց Ա. Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի գիտական գծով փոխտնօրեն, Արվեստի ինստիտուտի հայցորդ* Անի Գրիգորյանը: *Նույն ինստիտուտի Սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող* Շուշանիկ Մուրադյանը *ներկայացրեց հայ գրաֆիկայի պատմության մեջ իր հաստատուն տեղն ունեցող «Քաջ Նազարը՝ Արա Բեքարյանի նկարազարդումներում» թեման: Միջմշակութային հաղորդակցության համատեքստում հայ-ճապոնական երաժշտական առնչություններին էր վերաբերում Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, արվեստ. թեկնածու* Աննա Ադամյանի *զեկուցումը:*

Գիտաժողովի արդյունքներն ամփոփեց և եզրափակիչ խոսքով հանդես եկավ Արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստ. դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը:

Հոկտեմբերի 27-ին, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի դահլիճում տեղի ունեցավ համերգ՝ նվիրված ՀՀ անկախության 25-ամյակին, նստաշրջանին գիտական զեկուցումներով հանդես եկած երիտասարդ երաժիշտների մասնակցությամբ: Լիլիթ Արտեմյանի *(միջազգային մրցույթների դափնեկիր, դաշնակահարուհի),* Հովհաննես Մանուկյանի *(միջազգային մրցույթների դափնեկիր, կոմպոզիտոր, դաշնակահար, երգեհոնահար),* Սոնա Մակարյանի *(վոկալ),* Աննա Ադամյանի *(դաշնամուր),* Դավիթ Մելքոնյանի *(սաքսոֆոն),* Մարիաննա Պողոսյանի *(կիթառ),* Գոռ Սալնազարյանի *(բարիտոն) և* Էդգար Գյանջումյանի *(դաշնամուր) կատարմամբ հնչեցին Տիգրան Չուխաճյանի, Ֆրեդերիկ Շոպենի, Առնո Բաբաջանյանի, Արամ Խաչատրյանի, Վայն Շորթերի, Էդուարդ Բաղալյանի, Նիկոլ Գալանդերյանի, Պոլ Բոնոյի, Էդգար Գյանջումյանի ստեղծագործություններից:*

ԼԻԼԻԹ ԱՐՏԵՄՅԱՆ